ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2024/104

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ապրիլի 2024 թ. N 104

ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» **ՊՈԱԿ**

Գործունեության հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Անի թաղամաս, 11 փող. 5/2

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2024թ. ապրիլի 27-ին քննարկեց «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Ուսումնարան, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	10 հունվարի 2023 թ.
ինքնավերլուծության ներկայացում	28 հուլիսի 2023 թ.
փորձագիտական այցի իրականացում	13.11-16.11 2023 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	27 փետրվարի 2024թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	04 մարտի 2024թ.

Ուսումնարանի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 1-ը՝ **«Որակի ներքին ապահովման համակարգ»** գնահատվել է անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ Ուսումնարանի համաձայնությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով Ուսումնարանի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. Հաստատությունը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում

Գյումու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանն իրականացնում է իր առաքելությանը համապատասխան և տարածաշրջանում պահանջարկ ունեցող կրթական ծրագրեր: Առավել շուկայամետ կրթական ծրագրեր ունենալու նպատակով ուսումնարանն իրականացնում է որոշակի քայլեր ՊԿՁ-ները տեղայնացնելու և տարածաշրջանի կարիքներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Ուսումնասիրված են գործատուների հետաքրքրությունները ՄԿԾ-ներ կազմելիս, շեշտադրված է կարողությունների վրա հիմնված ուսումնառությունը, կիրառվում են դասավանդման և ուսումնառության նորարարական արդյունավետ մեթոդներ: Դուալ համակարգով կրթական ծրագրի ներդրումը նպաստել է տարածաշրջանի խոշոր գործատուների հետ համագործակցության մեծացմանը և խորացմանը, ուսանողների և շրջանավարտների արագ աշխատաշուկա ինտեգրմանը: Ուսումնառության նյութերի տրամադրման համար ստեղծվել է էլեկտրոնային բազա: Ուսանողներին տրամադրվում են գործնական, ստեղծագործական, վերլուծական կարողությունները զարգացնող առաջադրանքներ: Կիրառվում են գնահատման մեխանիզմներ, կարևորվում են գործնական հմտությունները, սակայն առկա չէ գնահատման միասնական կանոնակարգ, սահմանված չեն գնահատման հստակ չափանիշներ:

Ուսումնարանը կրթական ծրագրերի համակարգային բենչմարքինգ դեռևս չի իրականացրել, մշտադիտարկման և բենչմարքինգի իրականացման կարգ և հստակ մեխանիզմներ ներդրված չեն:

Ուսումնարանն ունի անհրաժեշտ մասնագիտական որակներ, պրակտիկ փորձ ունեցող դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ: Համապատասխան որակավորում ունեցող մասնագետների ընտրությունն իրականացվում է մրցութային կարգով: Տարածաշրջանում համապատասխան մասնագետների սակավությունը և դասախոսական կազմի կայունությունը ՄՈՒՀ-ը փորձում է հաղթահարել նաև

սեփական ռեսուրսի՝ շրջանավարտների, զարգացման և ուսումնական գործընթացում ներգրավելու միջոցով:

Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանում ռեսուրսային բազան համապատասխանում է կրթական նպատակներին և ապահովում է ուսումնական գործընթացի իրականացումը: Ձևավորված է ուսումնական միջավայր: Ուսումնարանի գործունեությունն ապահովված է անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներով: Ուսանողները, վարպետներն ու դասախոսները բավարարված են տրամադրվող ուսումնական ռեսուրսների հասանելիությունից; Ուսումնարանն ապահովում է ուսանողների և դասախոսների անվտանգությունը:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը***

Գյումրու թիվ 4 պետական արհեստագործական ուսումնարանը կարևոր դերակատարություն ունի Գյումրի քաղաքում նախնական մասնագիտական որակավորմամբ մասնագետների պատրաստման գործում: Բարդ սոցիալ-տնտեսական իրավիճակի պայմաններում ուսումնարանը կարողանում է իրականացնել իր առջև դրված նպատակները: ՈՒսումնարանի առաքելությունը, որն արտահայտում է ներքին և արտաքին շահակիցների կարիքները, նպատակները և խնդիրները համապատասխանում են ՈԱԾ-ին: Ուսումնարանն իրականավնում է ՈԱԾ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներին համապատասխան գործունեություն: Առկա է ռազմավարական ծրագիր և վերջինիս իրականացման պլան-ժամանակացույց: Գործում են ՌԾ-ի արդյունավետությունը գնահատող որոշակի մեխանիզմներ:

Ուսումնարանն ունի կառավարման գործընթացների արդյունավեությունն ապահովող մարդկային և նյութական ռեսուրսներ: Ներդրված է որոշումների կայացման կոլեգիալ մոտեցում, ներքին և արտաքին շահակիցները մասնակցում են իրենց վերաբերյալ որոշումների կայացմանը: Առկա է ֆինանսների բաշխման, այլընտրանքային ֆինանսական միջոցների հայթայթման մեխանիզմներ: Ուսումնարանում իրականացվող գործընթացները կանոնակարգված և փոխկապակցված են, պարբերաբար իրականացվում են ներքին գնահատման գործընթացներ:

Առկա են տվյալների հավաքագրման մեխանիզմներ և համակարգեր, սակայն արդյունքների համադրման և համակողմանի վերլուծության կարիք կա:

Ուսումնարանում ՈԱ համակարգը դեռևս ներդրման փուլում է: Առկա չէ ՈԱ պատասխանատուի հիմնական հաստիք և գործառույթները սահմանված չեն: ՈԱ գործընթացները հստակ չեն պլանավորվում, տարանջատված չեն ներքին և արտաքին շահակիցների դերակատարությունը ՈԱ գործընթացներում, առկա չեն ՈԱ գործընթացների թափանցիկությունը երաշխավորող մեխանիզմներ:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը:***

Ուսումնարանում առկա են ուսանողների ներգրավման հստակ մեխանիզմներ: Ուսանողները հնարավություն ունեն ստանալու խորհրդատվություններ, մասնակցելու ընդհանուր զարգացվածություն ապահովող արտալսարանային դասընթացների: Ուսումնարանի վարչական անձնակազմն ակտիվ համագործակցում է ուսանողների հետ վերջիններիս կարիքների բացահայտման և լուծումներ գտնելու ուղղությամբ: Առկա են ուսանողական սոցիալական ընկերություններ, որոնք ուսանողների մոտ

ձևավորում են ոչ միայն հետազոտական և ստեղծագործական մտածողություն, այլև նպաստում են ուսանողների ձեռնարկատիրական աշխատանք իրականացնելու կարողության զարգացմանը: Ձևավորված է ուսանողակենտրոն միջավայր:

Ուսումնարանը հետազոտական աշխատանքները բխեցնում է կրթական ծրագրերի առանձնահատկություններից, կապում է այն պրակտիկ խնդիրների լուծման հետ: Դասախոսական կազմն ունի դրական փորձառություն հետազոտական աշխատանք իրականացնելու ուղղությամբ, իրականացված հետազոտությունները կիրառվում են ուսումնական գործընթացներում:

Ուսումնարանում ներդրված է հաշվետվողականության համակարգ, առկա են ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման մեխանիզմներ՝ նպաստելով Ուսումնարանի գործունեության թափանցիկության և հրապարակայնության բարձրացմանը: Ուսումնարանում առկա են հետադարձ կապի ապահովման գործուն մեխանիզմներ, որոնք նպաստում են շահակիցների հետ կապի ամրապնդմանը: ՄՈՒՀ-ը քայլեր է ձեռնարկել իր ունեցած լավ փորձը՝ Ուսանողական ընկերությունների, նաև հանրակրթական դպրոցներում տարածելու ուղղությամբ: Կազմակերպում է կարճաժամկետ դասընթացներ միտված տարածաշրջանում եղած մասնագետների մասնագիտական կարողությունների շարունակական զարգաումանը: Ուսումնարանը պատասխանատվություն է ստանձնում բանակ զորակոչված և վերադարձած շրջանավարտների համար անվճար դասընթացների կազմակերպման ուղղությամբ, նպաստելով վերջիններիս արագ ինտեգրմանը աշխատաշուկա:

Ունի գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության լայն շրջանակ, միջազգային ծրագրերին մասնակցության դրական փորձառություն: Գործուն քայլեր է իրականացնում «Էրազմուս +» ծրագրերին մասնակցելու համար, ինչպես նաև ներքին շահակիցների շրջանում օտար լեզուների զարգացման ուղղությամբ:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Թերությունների վերացման ծրագիրն իրատեսական է և իրականացման դեպքում կբերի որակական դրական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:
3. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - Զարգացման ծրագրի վերանայմանը՝ ՄՈՒՀ-ի առջև դնելով առավել հեռանկարային և երկարաժամկետ նպատակներ,

- ուսանողների գնահատման հստակ կանոնակարգի և գնահատման չափանիշների ներդրմանը՝ ապահովելով գնահատման թափանցիկությունը,
- կրթական ծրագրերի մշտադիտարկման հստակ կանոնակարգի մշակմանն ու ներդմանը,
- շրջանավարտների զբաղվածության ցածր ցուցանիշների հիմքերի ուսումնասիրությանը և համակարգային վերլուծությանը,
- գործընթացների արդյունավետության գնահատման հստակ և չափելի որակական ու քանակական ցուցիչներ ունենալու անհրաժեշտությանը,
- դասախոսների և ուսանողների օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացմանը:

4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով Ուսումնարանի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2024 թ. ապրիլի 27
ք.Երևան